Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա (ՀԵԿԱ)

ՀՀ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՑԱՆՑ (ՀՀ ԿՁՑ)
FCEM (ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ) ՀԱՅԱՍՏԱՆ
WED (ԿԱՆԱՆՑ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ) ՀԱՅԱՍՏԱՆ - ԴԵՍՊԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀՀ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՑԱՆՑ
ARMENIAN YOUNG WOMEN'S ASSOCIATION
WOMEN ENTREPRENEURS NETWORK IN ARMENIA

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԱՊՐԻԼ 2018

Կայացավ ՀՀ Կին ձեռներեցների ցանցի հերթական հանդիպումը

Ապրիլի 7-ին ընդառաջ **Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան (ՀԵԿԱ) և ՀՀ կին ձեռներեցների ցանցը** հրավիրել էր ԿՁՑ ցանցի անդամների հանդիպում:
Հանդիպումը տեղի ունեցավ Երվանդ Քոչարի թանգարանում, ապրիլի 3-ին: Հանդիպումը սկսվեց թանգարանում կազմակերպված շրջայցով, կին ձեռներեցները ծանոթացան Ե. Քոչարի արվեստին:
Հանդիպման ընթացքում կին ձեռներեցներին ներկայացվեց «**Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով**» ծրագիրը:
Հանդիպման մյուս մասում քննարկում ծավալվեց կապված կին ձեռներեցների կարիքների հետ, քննարկվեցին հետագա գործողությունները:
Հանդիպման ավարտին ՀԵԿԱ-ի և Ե. Քոչարի թանգարանի կողմից անակնկալ մատուցվեց մասնակիցներին՝ Քոչարի աշխատանքը պատկերող տորթի տեսքով:

E-mail: ***info@aywa.am***
www.aywa.am;
www.businesswoman.am

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Գործարար շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների և առևտրարդյունաբերական պալատների ներկայացուցիչները համագործակցության հուշագիր ստորագրեցին, որը նպատակ ունի բարելավել գործարար միջավայրը Հայաստանում:

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի անունից հուշագիրը ստորագրեց ծրագրերի համակարգող Մարիամ Պողոսյանը:

«ՀԵԿԱ-ի և Կին ձեռներեցների ցանցի անունից, ողջունում ենք խորհուրդի ստեղծումը և կարևորում ենք դրա գործունեությունը: Հույս ունենք, որ խորհուրդի միջոցով տեղ կհասցնենք կին ձեռներեցների ձայն և կկարողանանք շահերի պաշտպանության հարթակը հասցնել մինչև Ազգային Ժողով»:

Մենք համոզված ենք, որ նոր կառույցը կնպաստի արդյունավետ երկխոսության կայացմանը Ազգային ժողովի և ՓՄՁ-ների միջև և արդյունքում կբարելավվի փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում գործարար միջավայրը:



E-mail: ***info@aywa.am***
www.aywa.am;
www.businesswoman.am

Government of the Netherlands

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀՀ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՑԱՆՑ
ARMENIAN YOUNG WOMEN'S ASSOCIATION
WOMEN ENTREPRENEURS NETWORK IN ARMENIA

Մեկնարկել է կարողությունների զարգացման դասընթացը ՀՀ Լոռու մարզի կանանց համար

«**Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով**» ծրագրի շրջանակներում **ՀՀ Լոռու մարզի կանանց** համար մեկնարկել է **կարողությունների զարգացման դասընթացը**: Դասընթացին մասնակցում էին ՀՀ Լոռու մարզի **Վանաձոր, Ալավերդի, Ախթալա** համայնքների կանայք:
«Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով» ծրագիրն իրականացվում է Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ) կողմից՝ Նիդերլանդների Կառավարության ֆինանսավորմամբ:
Կարողությունների զարգացման դասընթացին մասնակցում էին **գործող և սկսնակ կին ձեռներեցներ, գյուղատնտեսներ, կանանց ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի ներկայացուցիչներ:**
Կարողությունների զարգացման դասընթացի նպատակն է՝**ՀՀ մարզերում բարձրացնել կանանց մասնակցությունը սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտներում՝ կանանց ձեռնարկատիրական հմտությունների և գիտելիքների զարգացման միջոցով:**



E-mail: ***info@aywa.am***
www.aywa.am;
www.businesswoman.am

Government of the Netherlands

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀՀ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՑԱՆՑ
ARMENIAN YOUNG WOMEN'S ASSOCIATION
WOMEN ENTREPRENEURS NETWORK IN ARMENIA

Դասընթացի արդյունքում **կկազմավորվեն համայնքային կանանց խորհուրդներ**, որոնք հետագայում հնարավորություն կունենան մասնակցել փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթի՝ *համայնքային և միջհամայնքային սոցիալական նախաձեռնությունների իրականացման համար*:

Յուրաքանչյուր համայնքի կանանց խորհուրդ կընտրի խորհրդի առաջնորդների, ովքեր հնարավորություն կունենան կարողությունների զարգացման 2-րդ փուլի դասընթացի ժամանակ ներկայացնելու **իրենց համայնքում սոցիալական ձեռնարկության ստեղծման ծրագիրը**:

Սոցիալական ձեռնարկության ստեղծման լավագույն գաղափարները կմասնակցեն դրամաշնորհային ծրագրերի մրցույթին:

E-mail: info@aywa.am
www.aywa.am;
www.businesswoman.am

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան մասնակցեց «Էկոտուրիզմը Հայաստանում» կոնֆերանսին

2018թ.-ի ապրիլի 14-ին Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան մասնակցեց «Էկոտուրիզմը Հայաստանում» կոնֆերանսին:
ՀԵԿԱ-ն ներկայացված էր **«Օրգանական գյուղատնտեսությունը, խոհարարությունը և զբոսաշրջությունը»** բաժնում: Ելույթներով հանդես եկան ՀԵԿԱ ծրագրերի համակարգող՝ Մարիամ Պողոսյանը և Լոռու մարզից ՀԵԿԱ շահառու՝ հատապտուղների հավաքով զբաղվող կանանց խմբի առաջնորդ՝ Գոհար Խաչիկյանը: Իրենց ելույթներում բանախոսները ներկայացրեցին ՀԵԿԱ-ի սոցիալական ձեռնարկության՝ **ՆՈՒՌԻԿ կենտրոնի** գործունեությունը՝ որպես համայնքի և զբոսաշրջության զարգացման կենտրոն, **ԼԱՎ/Love** թեյերի արտադրությունը, որում ներգրավված են մեծ թվով կանայք Լոռու մարզից:
ՀԵԿԱ ծրագրերի համակարգողը ներկայացրեց նաև 2017թ.-ից **Համաշխարհային բանկի**խմբի անդամ **Միջազգային ֆինանսական կորպորացիայի և Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի կողմից իրականացվող վայրի հավաքի աջակցության ծրագիրը:**

E-mail: *info@aywa.am*
www.aywa.am;
www.businesswoman.am

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան մասնակցեց «Էկոտուրիզմը Հայաստանում» կոնֆերանսին

Ծրագրի նպատակն է **աջակցել վայրի հավաքչությունում ներգրավված կանանց, նպաստել արտադրողականության բարձրացմանը, աղքատության կրճատմանը և տնտեսական աճի խթանմանը:** Ելույթից հետո քննարկում ծավալվեց, կոնֆերանսի մասնակիցները ստացան իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

Արդեն 3-րդ տարին է, որ Հայաստանի ամերիկյան համալսարանը կազմակերպում է «Էկոտուրիզմը Հայաստանում» թեմայով կոնֆերանս: **Կոնֆերանսի նպատակն է խթանել էկոտուրիզմի զարգացումը Հայաստանում՝ առաջարկելով գաղափարների և փորձի փոխանակման հարթակ, ինչպես նաև ստեղծել շահագրգիռ կողմերի ցանց:**

E-mail: ***info@aywa.am***
www.aywa.am;
www.businesswoman.am

Մեկնարկել է կարողությունների զարգացման դասընթացը ՀՀ Տավուշի մարզի կանանց համար

«**Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով**» ծրագրի շրջանակներում **ՀՀ Տավուշի մարզի կանանց** համար մեկնարկել է **կարողությունների զարգացման դասընթացը**:

Դասընթացին մասնակցում էին ՀՀ Տավուշի մարզի **Նոյեմբերյան, Բերդավան, Կոթի** համայնքների կանայք: *«Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով» ծրագիրն իրականացվում է Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ) կողմից՝ Նիդերլանդների Կառավարության ֆինանսավորմամբ*:

Կարողությունների զարգացման դասընթացին մասնակցում էին **գործող և սկսնակ կին ձեռներեցներ, գյուղատնտեսներ, կանանց ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի ներկայացուցիչներ**:

Կարողությունների զարգացման դասընթացի նպատակն է՝**ՀՀ մարզերում բարձրացնել կանանց մասնակցությունը սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտներում՝ կանանց ձեռնարկատիրական հմտությունների և գիտելիքների զարգացման միջոցով**:

Դասընթացի արդյունքում **կկազմավորվեն համայնքային կանանց խորհուրդներ**, որոնք հետագայում հնարավորություն կունենան մասնակցել փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթի՝ *համայնքային և միջհամայնքային սոցիալական նախաձեռնությունների իրականացման համար*:

E-mail: ***info@aywa.am***
www.aywa.am;
www.businesswoman.am

Մեկնարկել է կարողությունների զարգացման դասընթացը ՀՀ Գեղարքունիքի մարզի կանանց համար

«**Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով**» ծրագրի շրջանակներում **ՀՀ Գեղարքունիքի մարզի կանանց**համար մեկնարկել է **կարողությունների զարգացման դասընթացը**: Դասընթացին մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզի **Ճամբարակ, Թթուջուր, Վահան** համայնքների կանայք:

«Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով» ծրագիրն իրականացվում է Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի (ՀԵԿԱ) կողմից՝ Նիդերլանդների Կառավարության ֆինանսավորմամբ:

Կարողությունների զարգացման դասընթացին մասնակցում էին **գործող և սկսնակ կին ձեռներեցներ, գյուղատնտեսներ, կանանց ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերի ներկայացուցիչներ**:

Կարողությունների զարգացման դասընթացի նպատակն է՝**ՀՀ մարզերում բարձրացնել կանանց մասնակցությունը սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտներում՝ կանանց ձեռնարկատիրական հմտությունների և գիտելիքների զարգացման միջոցով**:

Դասընթացի արդյունքում **կկազմավորվեն համայնքային կանանց խորհուրդներ**, որոնք հետագայում հնարավորություն կունենան մասնակցել փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթի՝ *համայնքային և միջհամայնքային սոցիալական նախաձեռնությունների իրականացման համար*:

Յուրաքանչյուր համայնքի կանանց խորհուրդ կընտրի խորհրդի առաջնորդների, ովքեր հնարավորություն կունենան կարողությունների զարգացման 2-րդ փուլի դասընթացի ժամանակ ներկայացնելու **իրենց համայնքում սոցիալական ձեռնարկության ստեղծման ծրագիրը**:

Սոցիալական ձեռնարկության ստեղծման լավագույն գաղափարները կմասնակցեն դրամաշնորհային ծրագրերի մրցույթին:

E-mail: info@aywa.am
www.aywa.am;
www.businesswoman.am

Տեղեկատվական հանդիպում Արմավիրում

2018թ.-ի ապրիլի 21-ին Արմավիրում կայացավ «**Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով**» ծրագրի տեղեկատվական հանդիպումը:
Հանդիպումը կազմակերպել էր **Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան Արմավիրի քաղաքացիական երիտասարդական կենտրոնի** հետ համատեղ:
Հանդիպմանը մասնակցում էին **սոցիալական ձեռներեցությամբ հետաքրքրված կանայք և աղջիկներ**: Հանդիպման ընթացքում ՀԵԿԱ նախագահ Լիլիթ Ասատրյանը ներկայացրեց կազմակերպության գործունեությունը և «Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով» ծրագիրը:
«Կանանց մասնակցության խրախուսումը տեղական մակարդակում՝ սոցիալական ձեռներեցության միջոցով» **ծրագրի նպատակն է՝ բարձրացնել կանանց մասնակցությունը սոցիալական, քաղաքական և տնտեսական ոլորտներում՝ զարգացնելով նրանց հմտություններն ու կարողությունները, աջակցելով ինքնավստահության բարձրացմանն ու մոտիվացմանը**:
Հանդիպումից հետո մասնակիցները հնարավորություն ունեցան քննարկում ծավալել իրենց հուզող հարցերի շուրջ:

E-mail: *info@aywa.am*
www.aywa.am;
www.businesswoman.am

Դասընթաց էքստրիմի սիրահարների համար

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիան էքստրիմի սիրահարների համար առաջարկում է ռաֆթինգի մարզիչների վերապատրաստման դասընթացներ: **Դասընթացների ավարտին լավագույն արդյունք ցուցաբերած մասնակիցները հնարավորություն կստանան աշխատել որպես ռաֆթինգի մարզիչներ և համագործակցել ՀԵԿԱ-ի հետ:**

Դիմել կարող են ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի (ներառված մյուս համախմբերը) բնակիչները: Դասընթացները կանցկացվեն մայիս-հունիս ամիսներին:

Հարցերի դեպքում գրել ՀԵԿԱ-ի էլ. հասցեին info@aywa.am կամ զանգահարել 098 58 07 87 հեռ. համարով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀՀ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՑԱՆՑ
ARMENIAN YOUNG WOMEN'S ASSOCIATION
WOMEN ENTREPRENEURS NETWORK IN ARMENIA

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ: ՈԳԵՇՆՉՈՒՄ: ՀԶՈՐԱՑՈՒՄ:

Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա՝ (ՀԵԿԱ) հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2004թ.:

ՀԵԿԱ-ի **նպատակն է**՝ նպաստել Հայաստանի Հանրապետության զարգացմանը՝ այդ գործընթացին ի նպաստ բերելով կանանց ներուժը՝ խթանելով կանանց դերի բարձրացմանը ՀՀ հասարակական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, բիզնես և այլ ոլորտներում:

ՀԵԿԱ-ի խնդիրներից են՝ խթանել և զարգացնել կանանց ձեռներեցությունը և ինքնազբաղվածությունը, խրախուսել կանանց համար աշխատատեղերի ստեղծումը, զարգացնել կանանց մասնագիտական և աշխատանքային կարողությունները, խթանել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը, կանանց իրազեկվածության մակարդակի բարձրացումը իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, աջակցել կանանց և աղջիկների առողջության պահպանմանը, խթանել կանանց ակտիվ մասնակցությունը որոշումների կայացման գործում, խթանել կանանց ներգրավվածությունը ազգային և ՏԻՄ մակարդակներում, աջակցել ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու ամրապնդմանը, աջակցել միջմշակութային հաղորդակցությանը և երկխոսությանը, ձևավորել հաղորդակցության հարթակներ, ձևավորել/ընդլայնել կանանց ֆորմալ խմբերի կապերը, զարգացնել կանանց ֆորմալ և ոչ-ֆորմալ խմբերի կարողությունները, տրամադրել թիրախավորված տեղեկատվական աջակցություն կանանց ֆորմալ և ոչ-ֆորմալ խմբերին, նպաստել ազգային արժեքների պահպանմանը, աջակցել տարածաշրջանում խաղաղության և կայունության ամրապնդմանը:

ՀԵԿԱ-ն գործունեություն է ծավալում ՀՀ ողջ տարածքում: ՀԵԿԱ-ի հիմնական շահառուներն են՝ 13 տարեկանից բարձր աղջիկներն ու կանայք: Ստեղծման օրվանից ի վեր՝ ՀԵԿԱ-ն իրականացրել է 100-ից ավելի ծրագրեր՝ ավելի քան 30.000 շահառուների ներգրավմամբ: ՀԵԿԱ-ի ծրագրերը մասնավորապես ուղղված են ՀՀ համայնքների զարգացմանը, ընտանիքների տնտեսական կայունության ապահովմանը, կանանց տնտեսական մասնակցության խթանմանը, առաջնորդության զարգացմանը, համայնքային գործընթացներում կանանց ներգրավմանը, կանանց առողջության պահպանմանը, որպես պատասխանատու քաղաքացի՝ կանանց իրազեկման և գիտելիքների մակարդակի բարձրացմանը, հայկական մշակույթի և ավանդույթների տարածմանը:

ՀԵԿԱ-ն որոշ ծրագրերում ապահովում է հասարակության ավելի լայն շերտերի մասնակցությունը՝ այսպիսով բարձրացնելով հասարակական իրազեկության մակարդակը կանանց հիմնահարցերի վերաբերյալ և կառուցելով առողջ մթնոլորտ հասարակության մեջ խրախուսելով և տարածելով հանդուրժողականություն և համերաշխություն հասարակության բոլոր շերտերում:

ՀԵԿԱ-ի ռազմավարական ուղղություններն են.

.Կանանց զբաղվածություն և ինքնազբաղվածություն

.Հանրային առաջնորդություն

.Մասնագիտական համայնքներ/ ցանցեր

ՀԵԿԱ-ն հիմնադրել է.

Կանանց աջակցության կենտրոնների ցանց (ներկայում՝ Երևանում և Լոռու մարզում): Կանանց աջակցության կենտրոնների բազմաբնույթ ծառայություններից ամեն օր օգտվում են բազմաթիվ կանայք և աղջիկներ:

Երիտասարդական ռեսուրս կենտրոններ (Վայոց Ձորի մարզի 10 գյուղական համայնքներում), որոնց նպատակն է՝ նպաստել գյուղական բնակավայրերի կանանց ու երիտասարդների առօրյայի կազմակերպմանը և համայնքային որոշումների կայացման գործընթացին ներգրավմանը:

ՀԵԿԱ-ն հիմնել և համակարգում է.

.ՀՀ Կին ձեռներեցների ցանցը, որը միավորում է ՀՀ-ում գործունեություն ծավալող ավելի քան 320 կին ձեռներեցների: ՀՀ Կին ձեռներեցների ցանցը, ի դեմս ՀԵԿԱ-ի, հանդիսանում է Կին ձեռներեցների համաշխարհային ասոցիացիայի (FCEM) անդամ:

.«Աղջիկների երկիր» շարժումը, որը միավորում է ՀՀ տարբեր մարզերում բնակվող 13-22 տարեկան 2.500-ից ավելի աղջիկների:

ՀԵԿԱ-ն ունի անդամության երկու տեսակ՝ անհատ և կորպորատիվ անդամություն՝ ի դեմս ՀՀ Կին ձեռներեցների ցանցի:

ՀԵԿԱ-ն անդամակցում է մի շարք միջազգային կառույցների, այդ թվում՝ FCEM (www.fcem.org), WECF (www.wecf.eu), ENYC (www.eycn.org) WED (www.womenseday.org).

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԿԱՆԱՆՑ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀՀ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՑԱՆՑ
ARMENIAN YOUNG WOMEN'S ASSOCIATION
WOMEN ENTREPRENEURS NETWORK IN ARMENIA

ՀԵԿԱ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆԸ ԿԱՐՈՂ ԵՔ ՀԵՏԵՎԵԼ ՆԱԵՎ՝

https://web.facebook.com/ngoaywa/

https://twitter.com/Armenian_Women

https://www.flickr.com/cameraroll

https://www.youtube.com/user/aywaheka

+374 (94/99) 58 07 87

info@aywa.am

Հարգելի՛ ընթերցող,

Մենք ուրախ կլինենք ստանալ Ձեր արձագանքը, կարծիքն ու տպավորությունները մեր գործունեության վերաբերյալ: